ԵԼՔ դաշինքի՝ Երեւանի քաղաքապետի (ավագանու) 2017թ. ընտրությունների նախընտրական ծրագիրը

Սիրելի՛ երևանցիներ. ԵԼՔ դաշինքի թիմը Ձեր վստահության քվեն ստանալով եւ Երևանի քաղաքային իշխանությունը ստանձնելով՝ առաջիկա հինգ տարիներին մայրաքաղաքում կիրականացնի հետևյալ քայլերը.

1. Առողջապահություն

- ✓ Վերանորոգել Երևանի 22 պոլիկլինիկաները. Պոլիկլինիկաները կաշխատեն հիվանդությունների կանխարգելման սկզբունքով եւ կդառնան առողջության ապահովման իրական կենտրոններ:

2. Գնումներ

- ✓ Մրցույթ հայտարարել Երևանում հանրային զուգարանների տեղադրման համար. քաղաքային նման ծառայություններ կազմակերպելու համար պայմանագրեր կկնքվեն միայն մրցույթում հաղթած ընկերությունների հետ:

3. Կառավարում

- ✓ Երևանի ավագանիում ձևավորել ժամանակավոր հանձնաժողով, որը կուսումնասիրի Երեւան քաղաքի կրթական հաստատությունների ղեկավարների կողմից ընտրական պրոցեսին ապօրինի միջամտությունների մասին ահազանգերը. ընտրական պրոցեսին ապօրինի միջամտություն ցուցաբերած տնօրենները կազատվեն աշխատանքից:
- ✓ Կրճատել Երևանի քաղաքապետարանի ծառայողական ավտոմեքենաների թիվը 70 տոկոսով:
- ✓ Օպտիմալացնել Երևանի քաղաքապետարանի հաստիքացուցակը:
- ✓ Երևան քաղաքի ավագանու կողմից ստեղծել հակակոռուպցիոն մարմին, որը կիրականացնի քաղաքային բյուջեի, լիցենզիաների ու թույլտվությունների, կայացված որոշումների օրինականության մշտադիտարկում: Հանրային վերահսկողության նպատակով ստեղծել հակակոռուպցիոն թեժ գիծ:

- ✓ Քաղաքային օրակարգի՝ հանրային մեծ հնչեղություն ունեցող հարցերը որոշել քաղաքային հանրաքվեով:
- ✓ Ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության վարչություն, որը կմշակի և կիրականացնի Երևանում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը:
- ✓ Մշակել մատչելիության համապարփակ պարտադիր նորմեր և մասնագիտական աջակցություն տրամադրել տարեկան առնվազն 450 կազմակերպությունների՝ իրենց ծառայությունները հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի դարձնելու և նրանց համար աշխատանքի հնարավորություն ստեղծելու նպատակով:

4. ***Առևտուր և սպասարկում***

- ✓ Միջոցներ ձեռնարկել բացօթյա առեւտուրը փակ տարածքներ եւ շուկաներ տեղափոխելու համար:

5. Արտաքին ձևավորում և գովազդ

- ✓ Հաշվառել գովազդային վահանակները և կանոնակարգել դրանց տեղադրումը:
- ✓ Երևանի քաղաքապետին կից ստեղծել դիզայներական խորհուրդ, որը կզբաղվի Երեւանի քաղաքային ավանդույթների պահպանման և ոճաբանության հարցերով:

6. Անշարժ գույքի կառավարում

- ✓ Միջոցներ ձեռնարկել մայրաքաղաքի բարձր կադաստրային արժեք ունեցող անշարժ գույքի և ավտոմեքենաների կադաստրային արժեքները ճշգրտելու և ըստ այդմ՝ դրանց համար գանձվող գույքահարկի չափն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:
- ✓ Իրականացնել կիսակառույց շինությունների հաշվառում, դրանց սեփականատերերի հետ սկսել բանակցություններ հետագա շինարարությունը, դրանց օտարումը կամ ապամոնտաժումը կազմակերպելու նպատակով: Ազատ տարածքներում

շինարարության թույլտվության տրամադրումը և հարկայնությունը խստիվ սահմանափակել:

7. Բնապահպանություն

- ✓ Առաջիկա հինգ տարվա ընթացքում մայրաքաղաքում եւ նրա շուրջը տնկել 500 հազար ծառ: Մայթերի եզրագծով տնկել ծառեր՝ ամառային տապից հետիոտների պաշտպանությունն ապահովելու նպատակով: Սկսել կանաչ տանիքների ծրագրի իրագործումը: Հատուկ ուշադրություն դարձնել Երեւանի զբոսայգիների թվի եւ մակերեսի ավելացմանը:
- ✓ Կառուցել նոր բնապահպանական ստանդարտներին համապատասխանող աղբավայր՝ ստեղծելով նաև աղբի վերամշակման արտադրություն:

8. Զբոսաշրջություն

- ✓ Մայրաքաղաքի տարբեր հատվածներում տեղադրել Երևանի եւ մերձակա մարզերի տեսարժան վայրերի եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) ինտերակտիվ քարտեզներ:
- ✓ Հրազդանի կիրճի երևանյան հատվածը հայտարարել քաղաքային ռեկրեացիայի եւ տուրիզմի գոտի: Այդ տարածքում առկա չորս պատմամշակութային հուշարձան-բերդերը կներառվեն այս գոտու մեջ՝ որպես մեկ ընդհանուր քաղաքային պարկ:

9. Կրթություն

- ✓ Նախակրթարանների և դպրոցների աշխատակիցներին, մանկավարժական կազմի ներկայացուցիչներին կարգելվի դպրոցներում կրել կուսակցական կրծքանշաններ:
- ✓ Արագացնել Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում գտնվող եւ վարձակալությամբ տրված մանկապարտեզային տարածքների վերադարձը քաղաքապետարանին՝ ապահովելու համար հերթագրված ավելի քան 8 հազար երեխաների ընդունելությունը:

- ✓ Ներդնել համայնքային ակտիվ դպրոցի հայեցակարգը. հանրակրթական դպրոցներն իրենց ենթակառուցվածքներով դասապրոցեսի ավարտից հետո պետք է շարունակեն ծառայել համայնքի երեխաների մարզական, արհեստագործական, արտադասարանային կրթության կազմակերպմանը:
- ✓ Դպրոցական ճաշարաններում աշակերտների համար սննդի վաճառքը կազմակերպել առողջ ապրելակերպի սկզբունքով և նրանց տարիքային զարգացման համար պարտադիր պահանջներից ելնելով՝ սննդի անվտանգության նորմերի խստիվ պահպանումով:
- ✓ Միջոցներ ձեռնարկել յուրաքանչյուր դպրոցական երեխայի՝ տարեկան առնվազն երկու անգամ թատրոն, դասական համերգ և թանգարան հաճախելիությունն ապահովելու համար:
- ✓ Երևանի յուրաքանչյուր վարչական շրջանի մեկական դպրոցում կիրականացվի ներառական կրթության համար անհրաժեշտ ու լիարժեք պայմանների ապահովման փորձնական ծրագիր:
- ✓ Ապահովել հաշմանդամություն ունեցող երեխաների նախադպրոցական որակյալ և մատչելի կրթությունը Երևանի բոլոր 160 մանկապարտեզներում՝ ստեղծելով հավասար պայմաններ և ներգրավելով անհրաժեշտ մասնագետների:
- ✓ Երևանի 10 դպրոցում ներդնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար խելամիտ հարմարեցումների ապահովման պիլոտային ծրագիրը և մշակել քաղաքային ռազմավարություն:
- ✓ Ստեղծել հայերեն ժեստերի լեզվի ուսուցման կենտրոն, որը կպատրաստի և կլիցենզավորի պրոֆեսիոնալ թարգմանիչներ և հնարավորություն կընձեռի հանրային ծառայությունների և կրթության ոլորտի անձանց անցնել ժեստերի լեզվի կարճաժամկետ դասընթացներ:

10. Կոմունալ տնտեսություն

- ✓ Բազմաբնակարան շենքերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար բնակչությանը լայնորեն իրազեկել համատիրությունների ձևավորման սկզբունքների, այդ գործընթացում քաղաքացիների իրավունքների եւ հնարավորությունների մասին: Անցկացնել համատիրությունների կառավարիչների իրական ընտրություններ: Նման փորձնական ծրագիր կիրագործվի նաեւ առանձնատներով թաղամասերի համար:

- ✓ Բնակիչների ընտրությամբ ներդնել բազմաբնակարան շենքերի կառավարումը մրցութային կարգով մասնավոր մասնագիտացված ընկերություններին հանձնելու համակարգը:
- ✓ Իրականացնել հանրային իրազեկման ակտիվ միջոցներ՝ քաղաքի մաքրության ապահովման գործում յուրաքանչյուր բնակչի դերն ու գիտակցումը բարձրացնելու համար:
- ✓ Ներդնել ձյունամաքրման նոր համակարգ, որն օդերևութաբանական ծառայության հետ համագործակցելով ձնամաքրման աշխատանքները սկսել ձյան տեղումներից առաջ:
- ✓ Բացառել աղբարկղերի տեղադրումը այնպիսի վայրերում, որը կարող է խոչընդոտել երթևեկությանը: Պարտավորեցնել աղբահանություն իրականացնող ընկերություններին և համատիրություններին պահպանել մաքրությունը բակերում և փողոցներում տեղադրված աղբարկղերի շուրջ:

11. Քաղաքային անվտանգության և հանգստի ապահովում

- ✓ Խստացնել հսկողությունը հրավառությունների և բազմաբնակարան շենքերում տեղակայված զվարճանքի կենտրոններում աղմուկի նկատմամբ և օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների համաձայն պաշտպանել բնակիչների իրավունքները:
- ✓ Հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացնել թափառող կենդանիների ստերջացում եւ ախտահանում, ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ նաև քնեցում:
- ✓ Ապահովել տեսողության խնդիր ունեցող անձանց համար տարածական կողմնորոշման ծառայությունների շարունակական տրամադրումը և նպաստել նրանց անկախ և ինքնուրույն կյանքին համայնքում:

12. Շինարարություն և բարեկարգում

- ✓ Բացառել Երևանի որևէ ճարտարապետական հուշարձանի ապամոնտաժումը կամ ձևախեղումը:

- ✓ Խթանել մայրաքաղաքի ստորգետնյա եւ բազմահարկ ավտոկայանատեղիների կառուցումը հարկային արտոնություններով եւ այլ միջոցներով:
- ✓ Երևանի բոլոր բազմաբնակարան շենքերի վրա տեղադրել հասցեների ցուցանակներ:
- ✓ Ապահովել քաղաքի բոլոր պատմամշակութային կոթողների գիշերային լուսավորությունը:
- ✓ Փողոցների ասֆալտապատման գործընթացն իրականացնել միայն երեկոյան ժամերին եւ ոչ աշխատանքային օրերին. փոսալցման համար քանդված փողոցների վերականգնումը իրականացնել 10 ժամվա ընթացքում:
- ✓ Ներդնել արևային մարտկոցներով աշխատող փողոցային լուսավորության համակարգեր:
- ✓ Ուսումնասիրել բետոնապատ կտուրներով ավտոտնակների տանիքների վրա խաղահրապարակներ ստեղծելու հնարավորությունը:
- ✓ Երևանի Լենինգրադյան փողոցը վերանվանել Լեոնիդ Ազգալդյանի անունով:

13. Տրանսպորտ

- ✓ Ձևավորել ավտոբուսային միջանցք, այսինքն՝ պողոտաների երթևեկելի գծերից մեկը պիկ ժամերին կհատկացվի բացառապես ավտոբուսների եւ տրոլեյբուսների երթևեկությանը:
- ✓ Ավտոբուսների, տրոլեյբուսների, մետրոպոլիտենի կողմից ուղեւորափոխադրումների չափաբաժինը առաջիկա հինգ տարիներին հասցնել 80 տոկոսի՝ ներկայիս 46 տոկոսի փոխարեն: Ապահովել քաղաքային տրանսպորտի լիարժեք հասանելիությունը մինչև կեսգիշեր:
- ✓ Գործարկել «Զվարթնոց» օդանավակայանը Երեւանի կենտրոնին կապող ավտոբուսային շուրջօրյա երթուղի:
- ✓ Խստագույն միջոցներ ձեռնարկվել քաղաքային տրանսպորտից օգտվող քաղաքացիների սպառողական իրավունքները պաշտպանելու համար (վարորդների արտաքին տեսքի, պահվածքի, տրանսպորտային միջոցների մաքրության եւ

տեխնիկական պատշաճ վիճակի, դրանցում ինչող երաժշտության հարցերը կլինեն վերահսկողության ներքո):

- ✓ Ձևավորել հեծանվային միջանցք հեծանվորդների անարգել երթևեկությունը կազմակերպելու համար, ներդնել հեծանիվով երթևեկողների համար խրախուսման միջոցներ:
- ✓ Ներդնել «խելացի» լուսացույցներ, որոնք երթևեկությունը կկարգավորեն ըստ ծանրաբեռնվածության: Մինչև «խելացի» լուսացույցների տեղադրումը բոլոր խոշոր խաչմերուկներում կգործեն երթակարգավարներ:
- ✓ Ամբողջությամբ թարմացնել Երեւանի ճանապարհային նշանները՝ բացառելով դրանց եւ լուսացույցների վատ տեսանելիությունը վարորդների եւ հետիոտների համար:
- ✓ Երևանի մետրոպոլիտենի կառուցումը դարձնել անընդհատ պրոցես՝ հնարավոր առավելագույն ծավալներով. մինչեւ 2022 թվականը պետք է գործարկվի մետրոպոլիտենի առնվազն մեկ նոր կայարան:
- ✓ Վերացնել Երևանում կայանատեղիների սպասարկման մենաշնորհը և քաղաքի տարբեր հատվածներում կայանատեղիների կազմակերպումը վստահել բաց եւ թափանցիկ մրցույթով ընտրված այնպիսի ընկերությունների, որոնք կապահովեն նվազագույն գին եւ առավելագույն որակ:
- ✓ Մինչև 2022 թվականը հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցնել արդեն իսկ առկա ավտոբուսների 40% (շուրջ 270 ավտոբուս), տրոլեյբուսների՝ 100 (շուրջ 77 տրոլեյբուս):

14. Քաղաքաշինություն

- ✓ Բանակցություններ վարել ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ մասնավոր ներդրողների հետ «Հին Երեւան» նախագիծը իրապես կյանքի կոչելու համար:
- ✓ Մայրաքաղաքի տարբեր հատվածներում հիմնադրել առնվազն հինգ լողավազան-լճակներ՝ որպես ամառային հանգստի գոտիներ, որոնք կկառավարվեն համայնք-մասնավոր համագործակցությամբ:
- ✓ Հիմնադրել քաղաքային անտառ՝ որպես ընտանեկան հանգստի գոտի: Այն առավելագույն չափով ունենալու է բնական անտառի պայմաններ:

Սույն ծրագիրը սպառիչ չէ. ծրագրի անբաժանելի մաս են կազմում նաև ԵԼՔ դաշինքի պաշտոնական ներկայացուցիչների ելույթներում և հարցազրույցներում բարձրացված հարցերը:

ԵԼՔ դաշինքը Երևանի կառավարումը իրականացնելու է երեք հայեցակարգային մոտեցումներով՝ արդյունավետություն, համաչափ զարգացում, հաշվետվողականություն:

ԵԼՔ դաշինք

Երևանի ավագանու ընտրություններ 2017